ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04
ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-19/4 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք. Երևան 05.06.2019թ.
ժամը՝ 11:00

Հանձնաժողովի նախագահ՝
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կենսաբազմազանության վերահսկողության վարչության բուսական աշխարհի վերահսկողության բաժնի պետ՝ Մ. Սանթրոսյան

Անդամներ՝
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության գլխավոր մասնագետ՝ Գ. Մակինյան
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վարչության ջրերի և մթնոլորտի վերահսկողության բաժնի պետ՝ Ա. Քամալյան
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կենսաբազմազանության վերահսկողության վարչության բուսական աշխարհի վերահսկողության բաժնի ավագ պետական տեսուչ՝ Է. Միքայելյան
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կենսաբազմազանության վերահսկողության վարչության բուսական աշխարհի վերահսկողության բաժնի ավագ պետական տեսուչ՝ Ա. Թորոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Լ. Ադոնց

1. ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-19/4 ծածկագրով մրցույթի հրավերի պահանջներին համաձայն որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին

1.1 Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրած տեղեկատվության, «Տրանզիտ Պրո» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի, ինչպես նաև բավարարում է հրավերով նախատեսված հիմնավորող փաստաթղթերի և ապրանքների տեխնիկական բնութագրի համապատասխանությունը հրավերով նախատեսված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

2. ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-19/4 ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին

<u>Հանձնաժողովը որոշեց.</u>

2.1. Ընտրված մասնակիցներ ճանաչել «Էքստրա Հոլդինգ» ՍՊԸ-ին՝ 5-րդ չափաբաժնի մասով, «Տրանզիտ Պրո» ՍՊԸ-ին՝ 9-րդ չափաբաժնի մասով, «ԻՆՖԻՆԻՏԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին՝ 7-րդ, 8-րդ չափաբաժինների մասով և «Էկոմիքս» ՍՊԸ -ին՝ 4-րդ, 6-րդ չափաբաժինների մասով:

2.2 Հաստատել ԳՀ ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

2.3 Մասնակիցների հետ համապատասխան չափաբաժինների մասով կնքել պայամանագրեր՝ անգործության ժամկետի ավարտից հետո:

2.4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.5 Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակիցներին անգործության ժամկետի ավարտից հետո առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի 10 (տասը) տոկոսի չափով՝ միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանքի կամ կանխիկ փողի, կամ բանկային երաշխիքի ձևով, որը ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Նախագահ՝	Մ. Սանթրոսյան	ԳՊ/ԳԱՊ	
Անդամներ՝	Գ. Մակինյան	ԳՊ/ԲԱ	
	Ա. Քամալյան	ԳՊ/ԲԱ	
	Է. Միքայելյան	ԳՊ/ԳԱ	
	Ա. Թորոսյան	ԳՊ/ԳԱ	
Քարտուղար՝	Լ. Ադոնց	ԳՊ/ՄՀՄ	